ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Արմավիրի մարզ
գ. Տարոնիկ, 1148
հեռ. /0231/ 6-71-51

N 39 «03» 07 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկի գյուղական համայնքի ղեկավարի 2012թ հունիս ամսվա որոշումները, կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր՝ 3 էջ

Տարոնիկ համայնքի ղեկավար՝ / Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ /

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտք թիվ 6043-12
04 07 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 15

« 12» Հունիսի 2012թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ ««ՏԵՂԱԿԱՆՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 17-ՐԴ ԿԵՏՈՎ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2387-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳԻ 48-ՐԴ ԿԵՏՈՎ, ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ԼՅՈՎԱ ՔՅԱՐԱՄԻ ՕՐՈՒՋՈՎԻ 2012Թ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ԴԻՄՈՒՄԸ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի բնակիչ, անշարժ գույքի սեփականատեր Լյովա Քյարամի Օրուջովի տնամերձ հողամասին / վկայականի N/ տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղական համայնք, Պ. Սևակի փողոց տուն 14 հասցե:
2.Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտե Վաղարշապատի ստորաբաժանում :

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ /Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ/

,,12,, Հունիսի 2012թ.

Գ. Տարոնիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թիվ 15

«21» հունիսի 2012թ.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՅՈՎԱ ՔՅԱՐԱՄԻ ՕՐՈՒՋՈՎԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզ Տարոնիկ գյուղի բնակչուհի Շողիկ Արծրունու Ղևոնդյանը դիմել է իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Տարոնիկ համայնքի սեփականաշնորհման հանձնաժողովի 22.03.1992թ. թիվ 3 արձանագրության քաղվածք, Արմավիրի մարզ գ. Տարոնիկ Շիրակի փողոց թիվ 3 հասցեում գտնվող ,տնամերձ օրինական 1600.0քմ. հողամասին կից 3000քմ ինքնակամ հողամասը, ինքնակամ կառուցված անհատական բնակելի տունը և կից կառույցները օրինականացնելու խնդրանքով :

Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն.

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ. և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, բավարարում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912 – Ն արձանի կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետին և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բանկելի տների կարգավիճակի մասին » ՀՀ օրենքի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել Արմավիրի մարզ, գ. Տարոնիկ, Պ. Սևակի փողոց թիվ 14 հասցեում գտնվող Լյովա Քյարամի Օրուջովին պատկանող բանկելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 1525 քմ. մակերեսով հողամասի չափով՝

ճանաչելով նրա սեփականության իրավունքը 19 քմ հողամասի և հողամասի վրա գտնվող շենք – շինությունների նկատմամբ:
2. Շենք – շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Լյովա Քյարամի Օրուջովին սեփականության իրավունքը սույն որոշման 1 –ին կետում նշված հողամասի և շենք – շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ